ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ- 2006

Բովանդակություն

Նախաբան.....3

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում.....3

2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում..... 5

3.Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 6

4. Սակագնային քաղաքականություն 6

5.Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում 9

6.Հեռահաղորդակցության բնագավառ.....12

7. էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում..... ... 15

8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ.....20

9. Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ..... 21

10. Համագործակցություն 22

.

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում և ջրային համակարգում կարգավորող մարմին է, որը գործում է ,Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասինե, ,էներգետիկայի մասինե, ,էլեկտրոնային հաղորդակցության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի կատարելագործումը շարու-նակական գործընթաց է և հանդիսանում է հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ հանձնաժողովը 2006 թվականին մշակել և հաստատել է մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

ա) «էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը», որով կարգավորվում են էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի օպերատիվ կառավարմանը չհանձնված սարքավորումների օպերատիվ ենթակայության խնդիրները և դրանց կարգավարման ընթացքում փոխհարաբերությունները,

բ) «էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման կարգը», որի շնորհիվ կարգավորվում են էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների փոխհարաբերությունները էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման համակարգում հաշվառման համալիրների տեղակայման և փոխարինման ընթացքում:

Անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել «Վերականգնվող էներգառեսուրսներ օգտագործող ինքնավար արտադրողների միկրոէլեկտրակայանների և էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի կարգում», որոնց արդյունքում կարգի գործողությունը տարածվում է նաև համակցված ցիկլով էլեկտրական և ջերմային էներգիա ինքնավար արտադրողների վրա:

2007 թվականին կշարունակվեն էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, կմշակվեն՝

ա) «էլեկտրաէներգիա արտադրող կայանները էլեկտրաէներգետիկական համակարգին միացնելու կարգը»,

բ) «էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական հզորությունների պատրաստականության ստուգման կարգը»,

գ) «Բաշխման համակարգի օպերատորի և սպառողների օպերատիվ փոխհարաբերությունների կարգը»:

Ելնելով էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման նոր կանոնների պահանջներից, 2007 թվականին կլրամշակվեն և կհաստատվեն էլեկտրաէներգիայի առուվաճառքի մատակարար-սպառող պայմանագրերի օրինակելի ձևերը:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել «Ջրային համակարգի կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող՝ ՀՀ ջրային օրենսգրքում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում և մի շարք այլ օրենքներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակման

աշխատանքներին:

«Ջրային համակարգի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 2007 թվականին հանձնաժողովը կմշակի և կընդունի այդ օրենքով պայմանավորված մի շարք իրավական ակտեր:

Հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված 2007 թվականի առաջնահերթ խնդիրները շարադրված են սույն ծրագրի 6-րդ բաժնում:

2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում

Հանձնաժողովը 2006 թվականին շարունակել է կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է հանրապետության համար կենսական և ռազմավարական նշանակություն ունեցող Իրան-Հայաստան գազամուղի Մեղրի-Քաջարան շուրջ 40 կմ երկարությամբ բնական գազի փոխադրման ցանցի կառուցման լիցենզիա:

ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան, 2006 թվականին հանձնաժողովը, ջրային ոլորտում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Երևան Ձուր» փակ բաժնետիրական ընկերության և ֆրանսիական «Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրի համաձայն «Երևան Ձուր» ՓԲԸ-ին 10 տարի գործողության ժամկետով տրամադրել է ջրային համակարգի օգտագործման թույլտվություն՝ համապատասխան պայմաններով, որոնց բաղկացուցիչ մասն է կազմում նաև վարձակալության ժամանակահատվածում սակագների ճշգրտման մեթոդաբանությունը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի «Ոռոգում-Ձրառ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» N164Ն որոշումը, հանձնաժողովը ոռոգման ջրի մատակարարման ծառայության մատուցման համար ջրային համակարգի օգտագործման թույլտվություններ է տրամադրել «Ոռոգում-Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Ախուրյան-Արաքս-Ձրառ», «Դեբեդ-Աղստև-Ձրառ», «Սևան-Հրազդանյան-Ձրառ», «Որոտան-Արփա-Ձրառ» ՓԲԸ-ներին:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացնելով հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման գործառույթը, 2006 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը հանձնաժողովը տրամադրել է տվյալների հաղորդման և ինտերնետ

հասանելիության ծառայությունների մատուցման 15 լիցենզիա:

2006 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանձնաժողովը տրամադրել է նաև փոքր ՀԷԿ-երի կառուցման և արտադրության թվով 19 լիցենզիա:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ապահովում է նաև կարգավորվող ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե պետական տուրքերի և ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գանձման գործընթացը: 2006 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ այդ աղբյուրներից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել մոտ 554 մլն դրամ, որը մինչև տարեվերջ կկազմի 1 193 մլն դրամ: 2007 թվականին հանձնաժողովը կշարունակի տարեկան պետական տուրքերի և ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գանձման ապահովման գործընթացը: Ներկայիս կանխատեսումներով նշված աղբյուրներից 2007 թվականին ՀՀ պետական բյուջե կգանձվի 1 275 մլն դրամ:

2007 թվականին հանձնաժողովը կշարունակի լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման գործընթացը՝ կատարելագործելով կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռման, նրանց համար գործունեության միատեսակ պայմանների ապահովման մեխանիզմները:

3. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկն է և նպատակաուղղված է կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը:

Կարգավորվող բոլոր ոլորտների համար արդեն մշակված և ներդրված ֆինանսատնտեսական հաշվետվությունների ձևերի հետ մեկտեղ, կարևորվում է ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել վերջիններիս մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման բնագավառներում ենթահաշիվների համակարգի ներդրման հանձնաժողովի փորձը, 2006 թվականին աշխատանքներ են տարվում ջրային համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ, որոնք իրենց շարունակական զարգացումը կունենան նաև 2007 թվականին:

2006 թվականին հաստատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որն էապես կնպաստի այդ ընկերության ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական հաշվետվությունների ձևերի կատարելագործման աշխատանքները շարունակական բնույթ են կրում և կիրականացվեն նաև 2007 թվականին:

4.Սակագնային քաղաքականություն

Հիմք ընդունելով 2005 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջը, հանձնաժողովն ընթացիկ տարում հաստատել է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվառման կարգը, ինչպես նաև համաձայնություն է տվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից ներկայացված հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարի հաշվետվության ձևին: Մինչև տարվա վերջ նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2007 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

Ընթացիկ տարվա սկզբին Վրաստան-Հայաստան սահմանի վրա ներկրվող ռուսական գազի գնի բարձրացման հետ կապված՝ հանձնաժողովը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացրած հայտերի հիման վրա վերանայել է գազամատակարարման համակարգի սակագները:

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից վաճառվող բնական գազի սակագների բարձրացման հետ կապված «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԷԿ)» բաց և «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունների ներկայացրած էլեկտրական էներգիայի սակագների հայտերի հիման վրա վերանայվել են նշված ընկերությունների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները: Միաժամանակ, էլեկտրա-էներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու, ինչպես նաև վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների

աճը կանխելու նպատակով վերանայվել են «Որոտանի ՀԷԿՀ» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները:

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար հաստատված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, համաձայն որոնց 2007 թվականի հունվարի 1 -ից սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը նվազեցվելու է մինչև 13.5%, ինչպես նաև հիմք ընդունելով էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները և ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու իրականացրած կապիտալ ներդրումների վերլուծության արդյունքները, հանձնաժողովը մինչև սույն թվականի դեկտեմբերի 1 -ը կճշգրտի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գործող սակագնային մարժայի մեծությունը: Համապատասխանաբար կվերանայվեն նաև արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող ծառայությունների սակագները:

Ընթացիկ տարում մշակվել և հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող լիցենզավորված գործունեության վերաբերյալ պարզեցված տեխնիկատնտեսական տեղեկատվության ձևերը:

2006 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ սահմանվել են թվով 7 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Լրամշակվել է բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների ներտնային գազասպառման համակարգերի նախագծման, շինհավաքակցման և կարգաբերման աշխատանքների կատարման ծախսերի հաշվարկման մեթոդիկան, որտեղ ներառված է նաև ծխատար և օդատար ուղիների առաջնային զննման, մաքրման ու վերանորոգման աշխատանքների հետ կապված ծախսերի հաշվարկը:

2005 թվականի վերջին Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական

ընկերության վարձակալության համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ֆրանսիական «Ժեներալ Դեզ Օ» ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ վարձակալության պայմանագիր ստորագրելուց հետո ստեղծել է «Երևան Ձուր» փակ բաժնետիրական ընկերությունը: Համաձայն «Երևան Ձուր» ՓԲԸ-ին հանձնաժողովի կողմից տրամադրված ջրային համակարգի օգտագործման թույտվության պայմանների անբաժանելի մաս կազմող վարձակալության 10 տարիների համար բազիսային սակագների ճշգրտման մեթոդաբանության, ընկերությունը՝ սկսած 2007 թվականից, յուրաքանչյուր տարի մինչև տվյալ տարվա փետրվարի 28-ը հանձնաժողով կներկայացնի հաջորդ հաշվարկային տարվա ճշգրտված սակագների հաշվարկը, որի քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշում կընդունի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող նոր սակագների վերաբերյալ: Բազիսային սակագների ճշգրտումը կիրականացվի սակագնային մեթոդաբանությունում ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, եվրո / դրամ փոխարժեքի և վարձակալ ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ հաշվարկային տարում տեղի ունեցած փոփոխություններից ելնելով:

Հաշվի առնելով «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության թիվ 60 լիցենզիայի վերախմբագրված և լրացված տարբերակի «Սակագներ» հոդվածի 6.Բ.1. կետը, յուրաքանչյուր տարի՝ սկսած 2005 թվականից մինչև 2007 թվականը ներառյալ, մինչև սեպտեմբերի առաջին երկուշաբթի օրը «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է հանձնաժողով ներկայացնել սակագների առաջարկվող ճշգրտումները՝ հիմք ընդունելով համապատասխան ծախսումների գնահատականները: Այդ կապակցությամբ հանձնաժողովը մշակել և հաստատել է «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագների սահմանման ու ճշգրտման համար ներկայացվող ծախսումների ֆորմատը:

Հաշվի առնելով նույն լիցենզիայի այլ դրույթները՝ հանձնաժողովը նախատեսում է 2007 թվականին քննարկել և հաստատել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված ծախսումների բաշխման մեթոդաբանությունը, համաձայն որի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը հանձնաժողովի սահմանած կարգով պետք է վարի համապատասխան կարգավորվող հաշիվները և դրանց հիման վրա կազմված

հաշվետվությունները 2008 թվականի սկզբից ներկայացնի հանձնաժողով:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

2007 թվականին հանձնաժողովի սահմանած կարգով կշարունակվեն կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացները, ինչպես նաև կուսումնասիրվեն ընկերությունների 2006 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կհրապարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Նոր որակական անցում կկատարվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացում: Սկսած 2004 թվականի երկրորդ կիսամյակից հանձնաժողովն ստեղծում է սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվական բազաներ, որոնք 2005 թվականից յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում են հանձնաժողովի վեբ կայքում: Այս աշխատանքների իրականացման նպատակը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի բազիսային ցուցանիշների սահմանումը և ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերը այդ ցուցանիշների նպատակային բարելավմանն ուղղելն է: Հանձնաժողովը 2006 թվականի սեպտեմբեր ամսին արդեն սահմանել է սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության բազիսային ցուցանիշները, իսկ մինչև տարեվերջ կսահմանի նաև սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության բազիսային ցուցանիշները: Հետագայում ընկերության ներդրումային ծրագրերի համաձայնեցման ընթացքում կսահմանվեն այդ ցուցանիշների ծրագրային մեծությունները:

2006 թվականին սկսվել է բնական գազի մատակարարման համակարգում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների ձևավորման գործընթացը: 2007 թվականին հանձնաժողովը կուսումնասիրի հավաքագրված տեղեկատվության հավաստիությունը և կշարունակի տեղեկատվական բազաների համալրման գործընթացը՝ հետագայում այդ ցուցանիշները սահմանելու նպատակով:

Ձրային համակարգում, հիմք ընդունելով հաստատված «Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների սահմանման և այդ չափանիշների

մոնիթորինգի կարգը» և «Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների ներդրման և մոնիթորինգի ժամանակացույցը», հանձնաժողովը 2006 թվականի ապրիլին հաստատել է խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գրանցամատյանների օրինակելի ձևերը և դրանց վարման կարգը, ինչպես նաև հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևերը և դրանց ներկայացման կարգը:

2007 թվականի ընթացքում հանձնաժողովը կուսումնասիրի խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի չափանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և, անհրաժեշտության դեպքում, հաստատված գրանցամատյանների և հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերի մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ոռոգման ջուր մատակարարող ընկերությունների կողմից մատուցվող ծառայության առանձնահատկությունները, ընթացիկ տարում ուսումնասիրում է վթարների, ջրամատակարարման ընդհատումների տևողության և դիմում-բողոքների հաշվառման վերաբերյալ ընկերություններում ձևավորված, ինչպես նաև այս ոլորտում միջազգային փորձը:

Մինչև 2007 թվականի ապրիլ ամիսը, համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ, հանձնաժողովը կսահմանի վերը նշված չափանիշների վերաբերյալ գրանցամատյանների և հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը:

Իրականացվող ներդրումների, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը մի շարք կարգավորվող ընկերությունների համար հաստատել է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգեր: Այս գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ներդրվել են եռամսյակային հաշվետվությունների ձևեր և յուրաքանչյուր տարի ուսումնասիրվում է ընկերությունների կողմից նախորդ տարվա ընթացքում իրականացված գնումներ գործընթացը՝ կազմելով համապատասխան վերլուծական տեղեկանքներ: 2007 թվականին հանձնաժողովը կշարունակի ընկերությունների կողմից իրականցվող գնումների ուսումնասիրության գործընթացը և անհրաժեշտության դեպքում կկատարելագործի դրանց իրականացման մեխանիզմները:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական արդյունքներ, որոնք վկայում

են բնագավառի զարգացման կայուն տեմպերի մասին: 2006 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 46 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 51-ը գտնվում են կառուցման փուլում: Այժմ գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է մոտ 57 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով արտադրում են շուրջ 200 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 119 ՄՎտ և սպասվում է, որ դրանք գործարկումից հետո տարեկան միջին հաշվով կարտադրեն ավելի քան 443 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէներգետիկայի կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց իրականացման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2006 թվականի առաջին երեք եռամսյակի ընթացքում լիցենզիայի պայմաններում սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ սահմանված ժամկետում դրանց համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերը հանձնաժողով չներկայացնելու համար հանձնաժողովը որոշում է կայացրել 7 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու և պետական բյուջե 15.6 մլն դրամ փոխանցելու վերաբերյալ:

2007 թվականին հանձնաժողովը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացման տեմպերը պահպանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց պարտավորությունները պատշաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան տույժեր:

6.Հեռահաղորդակցության բնագավառ

Հանձնաժողովը 2006 թվականին մեծածավալ աշխատանքներ է տարել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելու համար: Այս բնագավառում գործունեություն իրականացնող անձանց փոխհարա-բերությունները հստակեցնելու նպատակով հանձնաժողովը մշակել և հաստատել է լիցենզավորման ենթակա գործունեությունների լիցենզավորման, ռադիոհա-ճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և վեճերի լուծման գործընթացները կանոնակարգող, ինչպես նաև գործունեություն իրականացնելու համար օրենքով

նախատեսված վճարները սահմանող փաստաթղթեր: Ընդ որում, այս փաստաթղթերը մշակելիս, հանձնաժողովը նպատակ է ունեցել հնարավորինս պարզեցնել մինչ այժմ գոյություն ունեցող ընթացակարգերը, ինչպես նաև օպտիմալացնել գործունեության լիցենզիա կամ թույլտվություն տրամադրելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը: Սահմանվել են նաև լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը և այլ առաջնային փաստաթղթեր:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունից ընդունել է էլեկտրոնային հաղորդակցության ոլորտին առընչվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ հանձնման-ընդունման ընթացքում սերտորեն համագործակցելով նախարարության և շահագրգիռ ընկերությունների հետ: Ելնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման քաղաքականությամբ պայմանավորված առաջնահերթ խնդիրներից, հանձնաժողովը 2007 թվականին նույնպես կշարունակի այդ համագործակցությունը, նպատակ ունենալով կարգավորման գործընթացները դարձնել առավել թափանցիկ և ընկալելի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, հանրության և հասարակական կազմակերպությունների համար:

Հաշվի առնելով 2006 թվականի կատարած աշխատանքները և ուսումնասիրելով այդ բնագավառի կարգավորման հարցում եվրոպական, այդ թվում՝ նախկին խորհրդային մի շարք երկրների (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) առաջավոր փորձը, հանձնաժողովը նախատեսում է 2007 թվականի ընթացքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, գործունեություն ծավալել հետևյալ ուղղություններով.

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում մրցակցության զարգացում,
- լիցենզավորված անձանց՝ օրենսդրության և լիցենզիայի (թույլտվության) պահանջների կատարման ընթացքի մոնիթորինգ, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցերի ոլորտում մրցակցության երաշխավորում և որևէ աղավաղման բացառում,

- սահմանափակ ռեսուրսների, ներառյալ ռադիոհաճախականությունների տիրույթի և համարների արդյունավետ օգտագործման ապահովում,
- էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում գործունեություն ծավալելու ընթացակարգերի հնարավորինս պարզեցում,
- մինչև «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց շահագործելու կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու համար նախկինում տրված լիցենզիաները և ռադիոհաճախականություններ օգտագործելու թույլտվությունները գործող օրենսդրությանը համապատասխանեցում,
- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումները խթանող իրավական դաշտի զարգացում,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների գործունեության որակի չափանիշների սահմանում,
- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի չափանիշների սահմանում,
- հանձնաժողովին հատկացված ռադիոհաճախականությունների առևտրային (կոմերցիոն) տիրույթի օգտագործման պլանավորում և համակարգում,
- ռադիոհաճախականությունների տիրույթն օգտագործելու թույլտվություն ունեցող անձանց գրանցամատյանի ստեղծում և հրապարակում:

Մինչև 2006 թվականի վերջը կմշակվի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության հայտարարությունը, որի դրույթների իրականացման նպատակով 2007 թվականին կմշակվեն և կնդունվեն կոնկրետ իրավական ակտեր, մասնավորապես՝ նպատակաուղղված հեռահաղորդակցության շուկայի հնարավորինս ազատականացմանը:

Հանձնաժողովը, համագործակցելով Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում գործող «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության հետ, կիրականացնի հեռահաղորդակցության զարգացած ենթակառուցվածք ունեցող եվրոպական և ամերիկյան, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների

ներդրման գործում զարգացման բարձր տեմպեր ունեցող երկրներում համընդհանուր ծառայությունների մատուցման փորձի ուսումնասիրություն:

Նպատակ ունենալով ընդգրկուն խորհրդատվական աջակցություն ստանալ միջազգային լավագույն փորձի վերաբերյալ և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները, հանձնաժողովը դիմել է PPIAF հիմնադրամին՝ համընդհանուր ծառայությունների ներդրման հետ կապված փաստաթղթերի փաթեթ նախապատրաստելու համար համապատասխան աջակցություն ստանալու ակնկալիքով: Ծրագրի բարեհաջող ընթացքի դեպքում հանձնաժողովն իր տրամադրության տակ կունենա համընդհանուր ծառայությունների ներդրման, համընդհանուր ծառայությունների հիմնադրամի ձևավորման, համալրման և կառավարման վերաբերյալ փաստաթղթերի ամբողջական փաթեթ: Նշված աշխատանքների իրականացումը մեծապես կնպաստի հեռահաղորդակցության ծառայությունների իրական հասանելիությանը և մատչելիությանը հատկապես մարզերում և ենթակառուցվածքների համեմատաբար ցածր զարգացում ունեցող գյուղական վայրերում:

2007 թվականի ընթացքում հանձնաժողովը, հետևելով թիվ 60 լիցենզիայի պայմանների կատարմանը, պարբերաբար ուսումնասիրություններ կանցկացնի «ԱրմենՏել» ՓԲԸ-ում: Նախատեսվում է իրականացնել գյուղական ցանցերի զարգացման նպատակով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից CDMA անլար ցանցերի ներդրման գործընթացի մոնիթորինգ, ինչպես նաև գործուն քայլեր իրականացնել ծրագրի բարեհաջող ավարտն ապահովելու ուղղությամբ: Հանձնաժողովն իրատեսական է համարում CDMA տեխնոլոգիայով անլար հեռախոսակապի ներդրման գործընթացի շարունակումը 2007 թվականի ընթացքում, որը հնարավորություն կտա գյուղական բնակավայրերում օգտագործել ոչ միայն թվային հեռախոսակապ, այլև ունենալով արագագործ ինտերնետային ծառայություն՝ օգտվել ժամանակակից տեղեկատվական ծառայություններից:

Հարկ է նշել, որ CDMA անլար ցանցերի նշված տեխնոլոգիան լայն տարածում է գտել բավական թվով երկրներում, մասնավորապես՝ ԱՊՀ-ում, Չինաստանում, Հնդկաստանում և այլ զարգացող երկրներում:

Հայաստանի Հանրապետության հետագա զարգացումը մեծապես պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչը ուղղակիորեն ենթադրում է հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայություն և, մասնավորապես, ինտերնետ հասանելիություն:

Այս կապակցությամբ 2007 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի հանրապետությունում ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը, ինչի համար էլ 2006 թվականին կատարվել է առաջին քայլը՝ շահագրգիռ բոլոր կողմերի (Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ, «ԱրմենՏել», ինտերնետ ծառայություններ մատուցողներ) հետ համատեղ քննարկումներից հետո ապրիլ ամսին հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցողի կամ «ԱրմենՏել»-ի արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ինտերնետի ափլինք (uplink) արբանյակային հասանելիության գնագոյացման բանաձևը, որով պրովայդերներին հնարավորություն է ընձեռվել իրենց արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ստանալու «ԱրմենՏել»-ի բացառիկ իրավունքը հանդիսացող ինտերնետի ափլինք (uplink) արբանյակային հասանելիության ծառայությունը:

Շարժական կապի երկրորդ օպերատորի մուտքով պայմանավորված մրցակցության արդյունքում անհամեմատ բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը. արդեն հանրությանը մատուցվում են նոր ծառայություններ, մասնավորապես, GPRS (տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ընձեռում), կանխավճարային քարտերի միջազգային ռոումինգ և այլն: էլեկտրոնային հաղորդակցության շուկայում նկատվում են շարժական կապի սակագների նվազման և հեռախոսային կապի ծավալների (տրաֆիկ) աճի հստակ միտումներ:

7. էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում

Վերլուծելով 2005 թվականին և 2006 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2006 թվականին սպասվող և 2007 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2007 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում կանխատեսվում է մուտք գործող էլեկտրական

էներգիայի ծավալի նվազում շուրջ 2.7 % -ով, ինչը պայմանավորված է հանրապետությունում գազիֆիկացման աշխատանքների շարունակմամբ: Միաժամանակ, գերնորմատիվային կորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կպակասի ընդամենը 0.5% -ով:

2007 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 47.22% (2005 թվականին կազմել է 43.01%, իսկ 2006 թվականին սպասվում է 44.15%), ջերմային էլեկտրակայաններինը՝ 18.93% (2005 թվականին կազմել է 28.93%, իսկ 2006 թվականին սպասվում է 24.01%), հիդրոէլեկտրակայաններինը՝ 33.76% (2005 թվականին կազմել է 28.06%, իսկ 2006 թվականին սպասվում է 31.8%) և հողմային էլեկտրակայանինը՝ 0.09% (2006 թվականին սպասվում է 0.04%):

Երկրորդ աղյուսակում տրված է բնական գազի 2006 թվականին սպասվող և 2007 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները: Ըստ կանխատեսման, 2007 թվականին 2006 թվականի համեմատությամբ սպառողներին առաքվող բնական գազի ծավալը կաճի՝ շուրջ 3.2%:

Երրորդ աղյուսակում տրված է կենտրոնացված ջերմամատակարարման և արդյունաբերական կարիքների համար ջերմային էներգիայի 2007 թվականի կանխատեսվող հաշվեկշիռը: 2007 թվականին 2006 թվականի համեմատությամբ ջերմային էներգիայի արտադրության աճ գրեթե չի սպասվում: 2007 թվականին 8.3% -ով կավելանա արդյունաբերական կարիքների համար «Նաիրիտ գործարան» ՓԲԸ -ի սպառումը:

Աղյուսակ №1

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2006-2007 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2006 թ. սպասվող	2007 թ. կանխա-տեսվող
1	**էլեկտրաէներգիայի արտադրություն**	մլն կՎտժ	**5644**	**5273**
1.1	այդ թվում՝ **ՀԱԷԿ**	"-"	2492	2490
1.2	**ՀԷԿ-եր**	"-"	1795	1780
1.2.1	որից՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	"-"	560	520
1.2.2	«Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ	"-"	1005	1000
1.2.3	Ձորա ՀԷԿ	"-"	70	70
1.2.4	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	"-"	160	190
1.3	**«Լոռի-1» հողմային էլեկտրակայան**	"-"	2	5
1.4	**ՋԷԿ-եր**	"-"	1355	998
1.4.1	որից՝ «Հրազդանի էներգետիկ [illegible]	"-"	1005	648
1.4.2	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	350	350
2	**էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար**	մլն կՎտժ	304.7	300.03
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	5.40%	5.69%
3	**Առաքում կայաններից**	մլն կՎտժ	**5339.30**	**4972.97**
4	**Ներհոսք**	մլն կՎտժ	334.7	275
5	**Ընդամենը մուտք բարձր լարման**	մլն կՎտժ	5674.0	5247.97
6	**Կորուստները բարձր լարման**	մլն կՎտժ	95.0	94.73
6.1	Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ	%	1.67%	1.81%
7	**Արտահոսք**	մլն կՎտժ	682	390
8	**Մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր»**	մլն կՎտժ	**4897.0**	**4763.2**
9	**Կորուստները բաշխիչ ցանցերում**	մլն կՎտժ	755.4	643
9.1	Նույնը՝ %-ով տող 8-ի նկատմամբ	%	15.43%	13.5%
10	**Ներքին սպառում**	մլն կՎտժ	**4141.6**	**4120.2**

Աղյուսակ №2

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2006-2007 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՄԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2006 թ. սպասվող	2007 թ. կանխա-տեսվող
1	**Բնական գազի ներկրում**	մլն մ ^{3}	**1719.1**	**1721.6**
2	**Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում**	մլն մ ^{3}	140	92.52
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	8.14%	5.37%
3	**Գազի ծախսը սեփական կարիքների համար**	մլն մ ^{3}	11.5	9.07
3.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	0.67%	0.53%
4	**Մղվել է ստորգետնյա պահեստարաններ**	մլն մ ^{3}	65	70
5	**Բնական գազի առաքումը սպառողներին** որից՝	"-"	**1502.6**	**1550.0**
5.1	էներգետիկ համակարգ	"-"	452	350
5.2	Արդյունաբերություն	"-"	350	387
5.3	Բյուջետային կազմակերպություններ	"-"	30	32
5.4	Բնակչություն	"-"	400	480
5.5	Ջեռուցման համակարգ	"-"	0.6	1.0
5.6	Այլ սպառողներ	"-"	270	300

Աղյուսակ №3

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2006-2007 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2006 թ. սպասվող	2007 թ. կանխա-տեսվող
1	**Ջերմային էներգիայի արտադրությունը,** այդ թվում՝	հազ ԳՋ	**1528.55**	**1530.86**
1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	1358.85	1530.86
1.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	169.7	0
2	**Ջերմային էներգիայի կորուստները,** այդ թվում՝	հազ ԳՋ	181.66	117.47
2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	98.66	117.47
2.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	83	0
2.3	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	11.89%	7.67%
3.0	**Ջերմային էներգիայի օգտակար առաքումը,** այդ թվում՝	հազ ԳՋ	**1346.89**	**1413.39**
3.0.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	1260.19	1413.39
3.0.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	86.7	0
3.1	*Կենտրոնացված ջեռուցման համար* որից՝	"-"	113.1	76.78
3.1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	26.4	76.78
3.1.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	86.7	0
3.2	*Արդյունաբերական կարիքների համար*	"-"	1233.79	1336.61
3.2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, այդ թվում՝	"-"	1233.79	1336.61
3.2.2	«Նաիրիտ գործարան» ՓԲԸ	"-"	1233.79	1336.61

8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ համապատասխան օրենքներով, մեծ նշանակություն է տալիս սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանությանը և շահերի հավասարակշռմանը:

Կարգավորվող անձանց հետ համատեղ, հասարակական կազմակեր-պությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ են կազմակերպվում սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Հանձնաժողովի համապատասխան ծառայությունը 2006 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 96 գրավոր բողոք, «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 532 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված բոլոր խնդիրներին համապատասխան ընթացք է տրվել: Քննարկումների շրջանակներում, հարցերն ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով, կատարվել է 20 ստուգայց:

Սպառողների շրջանում բացատրական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասրակական կազմակերպության հետ համատեղ, հայկական 2-րդ հեռուստաալիքով սպառողներին է ներկայացվել հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտներում սպառողների հիմնական իրավունքների ու պարտավորությունների մասին տեղեկացնող պաստառները: Այդ պաստառները փակցված են «Հայփոստ» ՓԲԸ-ի բոլոր բաժանմունքներում:

Սպառողներին հեռահաղորդակցության բնագավառի մասին ավելի մանրամասն իրազեկելու նպատակով 2007 թվականին նախատեսվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ,Բերինգ Փոյնթե խոհրդատվական ընկերության հետ մշակել և հրապարակել սպառողների իրավունքների ու պարտավորությունների վերաբերյալ բրոշյուրներ:

Հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտներին վերաբերող ՀՀ օրենքներին և իրավական ակտերին սպառողներին իրազեկելու նպատակով շարունակվելու է հեռուստատեսային հաղորդումների նոր շարքի կազմակերպումը:

2007 թվականին մարզպետարանների հետ համատեղ կշարունակվեն աշխատանքները մարզերի բնակչության հետ կապը բարելավելու, էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու, հանրային ծառայությունների վերաբերյալ սպառողների

դիմումներին, առաջարկություններին կապի այս ձևով ընթացք տալու ուղղությամբ:

9. Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ

2007 թվականին, հանձնաժողովի հրապարակային և թափանցիկ գործելաոճին հավատարիմ, նախատեսվում է զարգացնել համագործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ, որի շրջանակներում ծրագրվում է կազմակերպել քննարկումներ, սեմինարներ, մամլո ասուլիսներ, հանձնաժողովում հավատարմագրված լրագրողների, սպառողների շահերի պաշտպանությամբ մտահոգ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սպառողներին ծառայություններ մատուցող խոշոր ընկերությունների հետ համատեղ 2007 թվականին ևս կկազմակերպվեն սեմինարներ՝ հանրային ծառայությունների ոլորտը լուսաբանող զանգվածային լրատվամիջոցների և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանձնաժողովի ընդունած նորմատիվային փաստաթղթերի, ծառայություններ մատուցող ընկերությունների, սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով կտրվեն հանրությանը մատչելի պարզաբանումներ: Էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտի առանձնա-հատկությունների վերաբերյալ կկազմակերպվեն հասարա-կական լսումներ, բանավեճ-քննարկումներ, որտեղ մասնակիցները հնարավորություն կունենան հանդես գալու ելույթներով, ներկայացնելու առաջարկություններ:

Նկատի ունենալով, որ 2007 թվականին լրանում է հանձնաժողովի ստեղծման տասնամյա հոբելյանը, ծրագրվում է զանգվածային լրատվամիջոցներով իրականացնել ճանաչողական, տեղեկատվական բնույթի հրապարակումներ, հաղորդումներ, ստեղծել հանձնաժողովի գործունեության մասին հանրային կարծիքի արխիվ:

Կարևորելով կարգավորման գործընթացում հանրությանն առավելագույնս ներգրավելու անհրաժեշտությունը, նախատեսվում է շարունակել հանրային ծառայությունների վերաբերյալ մամուլի ամենօրյա արձագանքների պատշաճ ուսումնասիրությունը: Հարկ եղած դեպքում ահազանգերի վերաբերյալ գրավոր

պարզաբանումներ կպահանջվեն ծառայություններ մատուցող ընկերություններից:

Կշարունակվեն հանձնաժողովի անդամների, աշխատակազմի մասնագետների մասնակցությամբ ճանաչողական բնույթի հաղորդումները, ուղիղ հեռուստա- ռադիոեթերները, որոնք լավագույնս նպաստում են հանրության հետ հետադարձ կապի ամրապնդմանը:

2007 թվականին կհարստացվի նաև հանձնաժողովի ինտերնետային կայքը: Կայքի բարեփոխման արդյունքում, ավելի մատչելի և տեխնիկապես պարզեցված ձևով սպառողին կտրամադրվեն հանրային ծառայությունների ոլորտի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և նորմատիվ իրավական բազան:

Ծրագրվում է ակտիվորեն համագործակցել ԶԼՄ-ների հետ համատեղ անցկացվելիք բոլոր այն միջոցառումներին, որոնք նպաստում են կառավարություն-հանրություն երկխոսության զարգացմանը, լավագույն ձևով կազմակերպել հանձնաժողովի աշխատակազմի և հավատարմագրված լրատվամիջոցների համատեղ աշխատանքը, նպաստել հանրության՝ անաչառ տեղեկություն ստանալու իրավունքի ապահովմանը:

Ֆինանսական միջոցների առկայության դեպքում կտպագրվեն նաև սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող գովազդային պաստառներ, հեռուստատեսությամբ կհեռարձակվեն սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվական հոլովակներ:

10. Համագործակցություն

Հանձնաժողովն իր առաջնահերթ խնդիրներից և պարտականություններից է համարում աշխատակազմի ուսուցման ու վերապատրաստման, միջազգային փորձի ուսումնասիրության և ներդրման, փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպումը: Այդ առումով հանձնաժողովի մասնագետները Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ երկրների էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) անդամակցության շրջանակներում 2006 թվականին մասնակցել են սակագնային, լիցենզավորման, իրավաբանական կոմիտեի նիստերին, «Ամառային դպրոց» դասընթացին, ընկերակցության տարեկան համաժողովներին:

Հանձնաժողովը հեռահաղորդակցության կարգավորման հարցերով սերտորեն համագործակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում գործող ,Բերինգ Փոյնթե խորհրդատվական ընկերության հետ: Հանձնաժողովի մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ,Բերինգ Փոյնթե

ընկերության, Միջազգային հեռահաղորդակցության ընկերակցության կողմից կազմակերպվել են մի շարք սեմինարներ տարբեր թեմաներով, մասնավորապես՝

- Առևտրի համաշխարհային կազմակերպության նկատմամբ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը հեռահաղորդակ-ցության և տեղեկատվության ոլորտում,
- հեռահաղորդակցության ոլորտում կարգավորողի կողմից վեճերի լուծում,
- համընդհանուր ծառայություններ և համընդհանուր հասանելիություն,
- հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարներ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրումը և այդ առումով 2007 թվականին նույնպես կշարունակի իր մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները, ինչպես նաև համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ: 2007 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը՝

-էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին,

-Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության աջակցությամբ հանձնաժողովի աշխատակազմի համար նախատեսված՝ հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող հիմնահարցերի վերաբերյալ մի շարք ուսուցողական միջոցառումների, ինչպես նաև ոլորտի համաժողովներին և այլ հանդիպումներին,

-ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ արդեն իսկ ավանդույթ դարձած փորձի փոխանակման հերթական հանդիպումներին,

-ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթությամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին,

-ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ,Փիէյ Քընսալթինգ Գրուպե խոհրդատվական ընկերության կողմից կազմակերպվող էներգետիկայի բնագավառին և ջրային համակարգին վերաբերող սեմինարներին: